հովիտներից մէկի մէջ, բարձր դիրքի վրայ: Ճանապարհին անցանք Մոգունք գիւղը, որի մերձակայ մորուտների մէջ մի ժամանակ ձգեցին հինգ հարիւր մոգերի գլուխներ, այդ պատճառով եւ կոչուեցաւ Մոգունք կամ «Մոգաց գերեզման»:

Երեկոյեան կիսամռայլի միջից վանքի թանձր, ամրոցաձեւ շրջապարիսպը խիստ ճնշող տպաւորութիւն էր գործում: Ես պէտք է մնայի փակուած այդ պարիսպների մէջ: Այդ միտքը աւելի ճնշող էր, աւելի ծանր էր...

Նայում էի դէպի տասնեւոեց դարերի պատկառելի սրբավայրը, նայում էին դէպի սքանչելի բարձրաւանդակը, որի վրայ կանգնած էր նա, նայում էի դէպի շրջապատող լեռները, որ գրկել էին նրան, նայում էի դէպի կանաչազարդ հովիտը, որ սփռուած էր նրա առջեւ, նայում էի եւ մտածում էի, թէ հայկական գեղարուեստը, ճարտարութիւնը զարգացաւ վանքերի շինութեան մէջ, իսկ հայկական գեղասէր ճաշակը զարգացաւ տեղերի եւ տեսարանների ընտրութեան մէջ, որ վայելուչ էին նրանց կառուցման համար:

Երբեմն մի ամենահասարակ հակադիպութիւն փարատում է մեր սրտից ամենածանր տարակուսանքներ: Ասլանը յայտնեց, որ ինձ պէտք է թողնէ այդ վանքում, իսկ ես լռեցի, չյայտնեցի նրան իմ դժկամութիւնը: Բայց երբ, դեռ վանքը չհասած, ճանապարհին պատմեց ինձ դեռ չմոռացուած աւանդութիւնը, թէ այդ վանքում աշխատել են հայկական դպրութեան Ոսկեդարի ականաւոր մարդիկը, թէ այդ վանքի խլութեան մէջ են կատարուել նրանց մտաւոր վաստակները, թէ այդ վանքում են դրուած եւ նրանց պաշտելի շիրիմները, այդ բոլորը լսելով, իմ մտատանջութիւնը ամոքուեցաւ, իմ կասկածները փարատուեցան, եւ ես խոնարհուեցայ անցեալ ժամանակների սրբազան յիշողութիւնների առջեւ՝ աշխատել եւ սովորել այն յարկի տակ, որտեղ աշխատել են մեր բազմավաստակ հայրերը, ոգեւորուել նրանց անմոռանալի շիրիմներով, եւ սրտով ու հոգով նոիրուել ուսման ճգնութեանը:

Առաջինը, որ հեռուից գրաւեց իմ ուշադրութիւնը, դա էր վանքի շրջապարիսպի արեւելեան կողմում սիւների մի շարք, որ բարձր կոթողների նման կանգնած էին միմեանց մօտ: Ասլանը ինձ տարաւ նրանց մօտ: Դրանք թոով տասն գեղաքանդակ խաչքարինք էին, որ դրուած էին քարէ պատուանդանների վրայ: Աւանդութիւնը «Թարգմանչաց գերեզման» է կոչում այդ լուռ յիշատակարանները: Նրանցից մէկի վրայ ես կարդացի հայոց անպարտելի փիլիսոփայի՝ Դաւիթ Անյաղթի անունը: Այդ խաչքարերի խումբի առջեւ, փոքր-ինչ հեռու դրուած էին երկու անշուք գերեզմաններ. մացառների միջից հազիւ երեւում էին նրանք: Քարացած մամուռը դրել էր այդ տապանների վրայ իր գորշ-կանաչագոյն խաւերը, ոչ գիր եւ ոչ թոական չեն երեւում.